


Կանանց կրթութեան խնդիրը Գերմանիայում՝ յառա-
ջադիմութեան նոր քայլեր է անում: 1888 թ. մայմարում հիմ-
նում է Կանանց կրթութեան յեղափոխութեան ընկերու-
թիւնն արդէն ծանապարհ է քաց արել այդ ընկերութիւնը
կառուցում է քաղաքում հիմնել է առաջին կանանց գիմնա-
զիոնը, ուր աղջկերք նոյն ուսումն են ստանում, ինչ որ տը-
ղայք գիմնազիոններում: Այժմ արդէն պատրաստութիւններ
են տեսնում նոյնպիսի գիմնազիոններ քանապա քոյր մեծ

քաղաքներում: մանաւանդ որ կրթութեան նախարար պ.
Քոսսէն հակառակ չէ դրան, ինչպէս երեսում է նոյն այն
թղթաւորութիւնից որ այս օրերս շնորհել է մի օրիորդի գիմ-
նազիական ցնմութիւն տալու: Գիմնազիական վկայականը
իրաւունք է շնորհում համալսարան մտնելու, ահա թէ ի՜նչ
քանի են ծագում կանայք Գերմանիայում: հասարակաց կար-
ծիրքը նրանց կողմն է եւ երկի շուտով գերմանացի դոկտո-
րներից կը մրցեն դոկտորների հետ:



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ.

ՀԱՅՆ ՈՒ ԻՒՐ ՀԱՐԵՒԱՆ ԱԶԳԵՐԸ.

I.

ՔՐԴԻ ՀԱՇԻՒՐ.

Մէ Հայ մէ քրդի ծանաչ կեղնիւէդ հային օխտը հատ էծ կլինի, կըտայ քրդին, կասէ՝ տար պա-
հի, Բուրդն էծեր կը տանի, չուր տարին կը լմնայ, հայն կերթայ քրդին տուն կասէ՝ քուրդ, բեր իմ
էծեր տուր, էծեր պիտ տանեմ: Բուրդը կասէ՝ հայ, նստի ասեմ, քեզի, քու էծեր ինչիս եղեր ա.—

Քրդերէն

Հայերէն

Մը բը հիստա մրանի մընադդա խէյրանի,

Մը բը հիստա սաղանի մընադդա շքրանի,

Բընէ համդ դաթլէ նսպոյ,

Բընէ քօլ քէաթա դօլ,

Բընէ չալ քէաթա ձալ,

Բընէ կաւար քէաթա բըն դէաւար,

Բընէ բալի բալանի սալէ ջօթակ կար անի,

Ռարու սար խանի կոռան կրէն կոռանի,

Լէխտէն ծաւէ ոսատ դարանի,

Մանի շարժեկը դօշտ մախօր ծարմ՝ դա բը քիրա՛ի
դալանի,

Ղիգան կրէն ղիգանի քէր բըրըն փէնջար անի,

Քեր ռնդակըր կալան անի, կալան աւեթայ քոն-
ջայ խանի,

Դա տու արայի խօ բըդայ հասիկէ չլանի,

Աղ տու բըրըն բրայէ ախըր դամանի,

Լսեցի մեռել ես՝ մէկը տուի ժամահացի.

Լսեցի որ առողջ ես՝ մէկը մատաղ արեցի.

Կարմրագոյն այծն ամենեւին մի հարցնի.

Անեղջիւր այծն ընկաւ լիճը.

Նախշուն այծն ընկաւ հորի մէջ.

Կապոյտ այծն ընկաւ կենդանիների ոտնատակ.

Կարճականջ այծն երկու ուլ բերեց տարին.

Բարձրացաւ կտուր՝ տղերքը տղայութիւն արին.

Զարկեցին, աջ աչքը հանեցին.

Բերեցի մորթեցի, միսը կերայ, կաշին տուի կոթով
դանակի.

Եղջեկերն աղջկութիւն արին, դանակը տարան բան-
ջար բերին.

Դանակը կորցրին, կոթը բերին տան անկիւնը ձը-
գեցին.

Այժմ՝ դու տուր քո վերարկուն վարձ մեր հով-
ուին.

Այսուհետեւ ես և դու կը լինիք եղբայր ցվերջ
աշխարհի.

II.

ԹՈՒՐԻՔԻ ՀԱՇԻՒՐ.

Մէ Հայ մի թուրքի հարիր ոչխար կը տայ ի պահ: Հայի ոչխարների ապուրը պակասած կեղնի: Հայը թուրքին
կասէ՝ ոչխարներս տար պահէ, ձմեռնան արա, ինչ որ քո վարձն է կրկնակի ստացիր ինձմէ: Թուրքը կը յօժարի, ոչխար-
ներ կառնու կըտանի: Սենքերս թուրքն օրէն մէ ոչխար մորթելով ձմեռնան կեղնի: վերջին ոչխարը մորթած, մորթին տա-
կը ձգած, մի գաւաթ մածուն առաջը դրած ուտելիս, Հայը կըզնայ թիխ իւր ոչխարներ: Հայը կասէ, թուրք բեր իմ ոչ-
խարներ տուր որ տանեմ: Թուրքը կասէ՝ քի՛րվա (կնքարայր), նստիր ոչխարներուդ հաշիւը տամ:—

Թրքերէն

Հայերէն

Գեօգ գիւղաղը եր փաթլաղը

Երկինք որոտաց գետինքը պատառուեց

Դօխսանը բիրդան շաթլաղի

Իննսունը միանգամից տափը ծծեց:

Գա՛ն թանա գաղը:

Քանի՜ հատ մնաց:

Օն թանա գաղը:

Տասը հատ մնաց:

Դաշտան դուշտը քաշ թողը

Քարից ընկաւ գլխաւոր ոչխարը

Արես սօրա քէշ թողը:

Սքան հետեւեցին միւս հինգ ոչխարը:

Գա՛ն թանա գաղը:

Քանի՜ հատ մնաց:

Դօրթ թանա գաղը:

Չորս հատ մնաց:

Իքիսը վերդըմ գասաքա

Երկուսը տուի մնացործին:

Բիրը հէ՛ւ կեաթըմա հեսաքայ:

Միքը ամենեւին մի կցիր հաշուին:

Դաղը բիրըսը (տակի մորթին ցոյց տալով)

Մնաց մին (տակի մորթին ցոյց տալով)

Բու դա բիրըսընը դարըսը,

Այս էլ մէկի մորթին

Բուլուր վեր գօյընլարըն փարասը:

Համայէ տուր ոչխարների վարձագին:

Հայը բարկանալով մածնով գաւաթը կըտայ թուրքի գլխով: Թուրքը երեսը եւ միւրըք մածնաթափախ կասէ՝
Ահամիւղուայ, քի՛րվա՛նըն հէսաքը դրուտ վերդըք, ուզումե՞ք աղ չխտը = Փառք Աստուծոյ, մեր կնքարօք հաշիւը ուղիղ
տուինք, երեսներս սպիտակ դուքս եկաւ:
Ժան օթ. Սոյն հաշուեցոյցի Քրդական մասը գրի եմ առել Թուրքի Մասը վարդապետից, իսկ Թրքական մասը
Փաղըվանցի Ստեփաննոս վարդապետից,

Դ. Ժ. Վ.